

ՀԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՕՖԵՐՏԱ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻԶՈՑՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներքոնշյալ պայմանները հանդիսանում են **«Իզի Փեյ» Էլեկտրոնային վճարային համակարգի** օպերատորի /այսուհետ՝ նաև Համակարգի Օպերատոր/ և այդ պայմաններով ծառայություն ստանալու ցանկություն հայտնաձ Ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական անձանց /այսուհետ՝ նաև Հաճախորդ և /կամ Օգտատեր/ միջև **«Իզի Փեյ» Էլեկտրոնային վճարային համակարգի** միջոցով ծառայությունների մատուցման հրապարակային օֆերտայի դրույթներ: Ծառայություններից օգտվելու Օֆերտան կարող է ներկայացվել առցանց եղանակով կամ Համակարգի Օպերատորի մասնաճյուղերում՝ Օպերատորի կողմից սահմանված ձևով դիմում լրացնելու միջոցով կամ Օպերատորի կողմից սահմանված այլ եղանակով:

Հաճախորդին **«Իզի Փեյ» Էլեկտրոնային վճարային համակարգում հետագայում «Իզի Փեյ» ԷՎՀ** գրանցելու պահից և Հաճախորդի համար Հաշիվ ակտիվացնելու պահից Օֆերտան համարվում է ակցեպտավորված /հաստատված/ Օպերատորի և Հաճախորդի կողմից, և այդ պահից ի վեր Օֆերտան՝ սույն Ընդհանուր Պայմանների, Ծառայություններից Օգտվելու Կանոնների և Սակագների հետ մեկտեղ, կազմում է Օպերատորի և Հաճախորդի միջև կնքված՝ կատարման համար պարտադիր պայմանագիրը/ստորև՝

«Պայմանագիր»/:

Ընդունելով Օֆերտայի պայմանները՝ Հաճախորդը հաստատում է, որ ամբողջությամբ ծանոթացել է և ողջ ծավալով անվերապահորեն ընդունում է սույն Ընդհանուր Պայմանները, Ծառայություններից Օգտվելու Կանոններն ու Սակագները, որոնց գործող տարբերակները գետեղված են Օպերատորի պաշտոնական կայքում և/կամ ներկայացված են Օպերատորի մասնաճյուղերում:

1. Պայմանագրում օգտագործված հիմնական հասկացությունները

1.1.	<p>«Իզի Փեյ» Էլեկտրոնային վճարային համակարգ, հետագայում «Իզի Փեյ» ԷՎՀ՝</p>	<p>Առցանց վճարային գործիք, ինչպես նաև, Համակարգի Օպերատորին սեփականության և/կամ վարձակալության իրավունքով պատկանող սարքավորումների և ծրագրերի ամբողջություն, որն օգտագործվում է ինտերնետ միջավայրում առցանց գործառնություններ կատարելու համար և որի միջոցով Համակարգի Օպերատորն ապահովում է ծառայությունների մատուցումը Օգտատիրոջ համար:</p> <p>«Իզի Փեյ» ԷՎՀ-ում ունենալով «Իզի Ուալլեթ» և համապատասխան կանխավճար, Օգտատերը հնարավորություն է ստանում Համակարգի Օպերատորին հանձնարարել Օգտատերի անունից ձեռք բերել որոշակի ապրանք կամ ծառայություն: Համակարգի Օպերատորը Օգտատիրոջ ունեցած կանխավճարի հաշվին վերջինիս անունից կատարում է վճարումներ:</p>
1.2.	<p>Համակարգի Օպերատոր՝</p>	<p>«Իզի Փեյ» Սահմանափակ պատասխանատվությամբ վճարահաշվարկային ընկերություն, որի մասին տեղեկությունները տեղադրված են www.easypay.am ինտերնետային էջում: Նույն ինտերնետային էջում մանրամասն ներկայացված են բոլոր տեղեկությունները «Իզի Փեյ» ԷՎՀ-ի և դրանից օգտվելու պայմանների վերաբերյալ:</p>
1.3.	<p>«Իզի Ուալլեթ»՝</p>	<p>Օպերատորի կողմից վարվող հաշվառման վիրտուալ հաշիվ, որն օգտագործվում է Հաճախորդի կողմից Էլեկտրոնային Փողի ձեռքբերման և Էլեկտրոնային Փողով կատարված գործառնությունների հաշվառման համար: Հաշվի դրական մնացորդն արտահայտում է Հաճախորդի նկատմամբ Օպերատորի պարտավորության չափը:</p>
1.4.	<p>Գործընկեր</p>	<p>«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ, որը ապահովում է «Իզի Փեյ» ԷՎՀ-ի տարածմանն ուղղված միջոցառումներ իր բաժանորդներին սահմանափակ քանակով կարճ հաղորդագրություններ ուղարկելու միջոցով, ինչպես նաև ցանկացած գործողություն, որը գրավոր կհամաձայնեցվի Գործընկերոջ և Համակարգի Օպերատորի միջև:</p>

1.5.	«BeeMoney» ապրանքային նշան	Ապրանքային նշան, որը Գործընկերը կապահովի «Իզի Փեյ» ԷՎՀ-ի շրջանակներում Համակարգի Օպերատորին բացառիկ իրավունքով օգտագործման նպատակներով:
1.6	Թողարկող	«Իզի Փեյ» ՍՊԸ, որը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիա ստացած կազմակերպություն, որը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ստացել է նաև էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն:
1.7	«ԲիՄանի» ենթահաշիվ /էլեկտրոնային դրամապանակ/	BeeMoney ապրանքային նշանի օգտագործմամբ Համակարգի օպերատորի կողմից վարվող հաշվառման վիրտուալ ենթահաշիվ (էլեկտրոնային դրամապանակ), որն օգտագործվելու է Հաճախորդի կողմից էլեկտրոնային փողի ձեռքբերման, և էլեկտրոնային փողով կատարված գործառնությունների հաշվառման համար: Հաշվառման դրական մնացորդն Հաճախորդի նկատմամբ Օպերատորի պարտավորության չափը:
1.8.	Հաճախորդ կամ Օգտատեր՝	Ֆիզիկական անձ, կամ անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ որը, Թողարկողի հետ կնքած պայմանագրի և Համակարգի կանոնների համաձայն Համակարգում մատուցվող ծառայություններից օգտվելու և/կամ ապրանքներ ձեռք բերելու իրավունք է ստանում և այդ նպատակով կարող է օգտագործել նաև թողարկողի կողմից նախապես հայտարարված և սահմանված պայմանների ու կանոնների հիման վրա իր կողմից ձեռք բերված էլեկտրոնային փողը:
1.9.	Ծառայություն Մատուցող՝	Պաշտոնական կայքում ներկայացված իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը վաճառում է ապրանքներ, կատարում աշխատանքներ, մատուցում ծառայություններ, կատարում այլ քաղաքացիաիրավական գործարքներ նաև «Իզի Փեյ» ԷՎՀ-ի Օգտատերերի համար:
1.10.	Երրորդ անձ	«Իզի Փեյ» ԷՎՀ-ի Հաճախորդ/Օգտատեր չհանդիսացող ցանկացած ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ, որը կարող է որևէ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվել Հաճախորդի հետ,

1.11.	Վնաս	Վնասներ են իրավունքը խախտված անձի/Հաճախորդի, Օտարություն մատուցողի, Համակարգի օպերատորի կամ երրորդ անձանց, ինչպես նաև Գործընկերոջ/ ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր /բաց թողնված օգուտ/, ինչպես նաև ոչ նյութական վնասը:
1.12.	«Իզի Փեյ» ԷՎՀ-ից օգտվելու կանոններ՝	Սույն պայմանագրում և 1.2-րդ կետում նշված համացանցի աղբյուրներում պարունակվող կանոններ:
1.13.	Լիցքավորված գումար կամ Կանխավճար՝	Պայմանագրով նախատեսված վճարման գումար, որը Օգտատերը վճարում է Համակարգի Օպերատորին, և որի դիմաց Համակարգի Օպերատորը լիցքավորում է Օգտատերի «ԲիՄանի» հաշվառման ենթահաշիվը: Լիցքավորումը կատարվում է 1 փոխաժեքով՝ այսինքն մեկ ՀՀ դրամի դիմաց Օգտատերի հաշվառման հաշիվը լիցքավորվում է մեկ միավորով/ՀՀ դրամով:
1.14.	«Իզի Ուալեթ» Միավորներ՝	«Իզի Փեյ» ԷՎՀ-ի շրջանակներում ինտերնետային վճարման միջոց հանդիսացող միավորներ: 1 /մեկ/ «Իզի Ուալեթ» միավորը համարժեք է 1 /մեկ/ ՀՀ դրամի:
1.15.	Գաղտնաբառ՝	Օգտատիրոջ կողմից ստեղծվող թվերի և տառերի համակցություն, որը «Իզի Փեյ» ԷՎՀ-ի կողմից օգտագործվում է որպես Օգտատիրոջ նույնականացման միջոց և թույլ է տալիս մուտք գործել «Իզի Փեյ» ԷՎՀ և օգտվել «Իզի Փեյ» ԷՎՀ-ում գետեղված տեղեկատվությունից:
1.16.	Փին՝	Քառանիշ թվերի հաջորդականություն, որը «Իզի Փեյ» ԷՎՀ-ի կողմից օգտագործվում է որպես Օգտատիրոջ նույնականացման միջոց և թույլ է տալիս մուտք գործել «Իզի Փեյ» ԷՎՀ և օգտվել «Իզի Փեյ» ԷՎՀ-ում գետեղված տեղեկատվությունից, այն դեպքում երբ հաճախորդը անձամբ չի կատարել ելք համակարգից:
1.17.	Հաճախորդների տեսակներ՝	Իզի Ստարտեր Հաճախորդ՝ Հաճախորդ, որի ինքնությունն Օպերատորը չի ճշտել: Իզի Ստանդարտ Հաճախորդ՝ Հաճախորդ, որի ինքնությունը ճշտվել է Օպերատորի կողմից՝ Օպերատորի կողմից սահմանված ընթացակարգով

1.18	Սակագներ՝	Օպերատորի կողմից սահմանված սակագներ, որոնց հիման վրա միջնորդավճարներ են գանձվում Հաճախորդից մատուցվող Ծառայությունների դիմաց:
1.19.	Պաշտոնական կայք՝	Ինտերնետ ցանցում գետեղված Օպերատորի պաշտոնական կայքը:
1.20.	Ֆինանսական Գործակալ՝	Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկ, օտարերկրյա բանկի մասնաճյուղ կամ դրամական /փողային/ փոխանցումների իրականացման լիցենզիա ունեցող կազմակերպություն, որը Օպերատորի հետ կնքել է պայմանագիր Օպերատորի կողմից պատվիրակված որոշ գործառույթներ իրականացնելու համար /օրինակ՝ հաշվի համալրում, կանխիկ դրամի վճարում և այլն/:
1.21.	Բջջային հեռախոսահամար	Հաճախորդի կողմից իր բջջային հեռախոսահամարի՝ որպես հաշվի նույնականացուցիչ օգտագործելու դեպքում՝ բջջային օպերատորի կողմից տրամադրված GSM համար:
1.22.	Բջջային հավելված	Android կամ iOS հենքի հիման վրա մշակված հավելված, որի միջոցով հասանելի է դառնում Ենթահաշվի կառավարումը, Ծառայություններից օգտվելը, ինչպես նաև Հաճախորդի և Օպերատորի միջև տեղեկատվության /այդ թվում՝ էլեկտրոնային ծանուցումների/ փոխանակումը:

2. Ծառայություններ

- 2.1. Օպերատորը համաձայն գործող սակագների մատուցում է Ծառայություններ, իսկ Հաճախորդն օգտվում է Ծառայություններից՝ գործող օրենսդրության, համակարգի կանոնների և Պայմանագրի պայմանների համաձայն:
- 2.2. Ծառայությունների տեսակներ՝
 - 2.2.1. Հաշվի բացում,
 - 2.2.2. Հաշվի ընթացիկ սպասարկում,
 - 2.2.3. Հաշվի համալրում,
 - 2.2.4. Էլեկտրոնային Փողերի փոխարկում/մարում,
 - 2.2.5. մուտքային և ելքային փոխանցումներ,
 - 2.2.6. վճարումներ Իզի Փեյ ԷՎՀ-ում գրանցված Ծառայություն Մատուցողներին,
 - 2.2.7. Հաշվի մնացորդի և կատարված գործառնությունների մասին տեղեկատվության տրամադրում,
 - 2.2.8. Վեբ-կայքում նկարագրված այլ ծառայություններ:
- 2.3. Ծառայությունների տեսակները, դրանց մատուցման եղանակները, հնարավոր գործառնությունները, ժամկետները զետեղվում են պաշտոնական կայքի հրապարակային մասում և ներկայացվում են Օպերատորի մասնաձյուղերում:

3. Հաշվի կառավարում, Հաշվով կատարվող գործառնություններ

- 3.1. Օպերատորի կողմից այլ բան սահմանված չլինելու դեպքում՝ Հաճախորդը կարող է ունենալ միայն մեկ գործող գրանցում Համակարգում և, համապատասխանաբար, մեկ գործող ԲիՄանի ենթահաշիվ: Եթե Օպերատորը պարզում է, որ միևնույն անձի համար Համակարգում բացվել են մեկից ավելի ենթահաշիվներ, ապա Օպերատորը կարող է ծանուցմամբ անմիջապես դադարեցնել համապատասխան Պայմանագրերից որևէ մեկի կամ բոլորի գործողությունը:
- 3.2. Էլեկտրոնային եղանակով Հաճախորդին նույնականացնելու և ԲիՄանի ենթահաշվի կառավարումը թույլատրելու համար Հաճախորդին կարող են տրամադրվել համարներ, կոդեր, գաղտնաբառեր /փին/կամ այլ վավերապայմաններ:
- 3.3. Ենթահաշիվը կառավարվում է բջջային հավելվածի միջոցով կամ այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ:
- 3.4. Յուրաքանչյուր Էլեկտրոնային փոստի հասցե կամ բջջային հեռախոսահամար կարող է օգտագործվել միայն մեկ ԲիՄանի Էլեկտրոնային դրամապանակի միջոցով Ծառայություններ ստանալու համար:

- 3.5. Անկախ նույնականացման վավերապայմանների տրամադրման և Հաճախորդի կողմից դրանց օգտագործման հանգամանքից, Հաճախորդը ձեռք է բերում Իզի Ստանդարտ Հաճախորդի կարգավիճակ միայն Հաճախորդի ինքնությունը ճշտելուն ուղղված՝ Օպերատորի կողմից սահմանված գործառույթն իրականացնելու միջոցով:
- 3.6. «Իզի Փեյ» ԷՎՀ Օգտատերները կարող են նույնականացվել անձը հաստատող փաստաթղթով Օպերատորի գրասենյակում և մասնաճյուղերում:
- 3.7. Օպերատորը Հաճախորդի հետ կանխիկ դրամով գործառույթներն իրականացնում է իր մասնաճյուղերի, վճարային տերմինալների և Ֆինանսական Գործակալների միջոցով և այլ օրենքով չարգելված ձևերով:
- 3.8. Օպերատորի մասնաճյուղերում կամ Ֆինանսական Գործակալների միջոցով որևէ գործառնություն կատարելու համար, գործառնություն կատարող անձից կարող է պահանջվել ներկայացնել ինքնությունը հաստատող փաստաթուղթ, և այն չներկայացվելու դեպքում գործառնության կատարումը կարող է մերժվել:
- 3.9. Օպերատորն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափահասության տարիքը չբոլորած Իզի Ստանդարտ կարգավիճակ ունեցող Հաճախորդից պահանջել, որպեսզի իր գործողությունները հաստատվեն նրա օրինական ներկայացուցչի կողմից, եթե առկա չեն իրավական հիմքեր Հաճախորդին լրիվ գործունակ ճանաչելու համար:
- 3.10. Հաճախորդից և հօգուտ վերջինիս երրորդ անձանցից ստացված կանխիկ և անկանխիկ դրամի դիմաց Օպերատորը թողարկում է Իզի Ուալլեթի միավորներ և հաշվեգրում է այն Հաճախորդի ԲիՄանի ենթահաշվին: Հաճախորդի ԲիՄանի ենթահաշվիվը կարող է համալրվել նաև այլ Հաճախորդների Բիմանի էլեկտրոնային դրամապանակներից փոխանցված միջոցների հաշվին, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ եղանակներով:
- 3.11. Օպերատորի կողմից թողարկված Իզի Ուալլեթի միավորների գործողության ժամկետը չի սահմանափակվում, բացառությամբ Պայմանագրի 3.4 կետով սահմանված դեպքերի:
- 3.12. Բոլոր կանխիկ մարումները կլորացվում են դեպի ներքև՝ մինչև Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող մանրադրամի նվազագույն անվանական արժեքը:
- 3.13. Փոխանցում, վճարում կամ մարում կատարելու Հաճախորդի կարգադրությունը կատարվում է միայն այն դեպքում, եթե Բիմանի ենթահաշվի մնացորդը բավարար է Հաճախորդի կարգադրությունն ամբողջ ծավալով կատարելու համար՝ հաշվի առնելով նաև Օպերատորի վարձատրությունը: Այլապես նման գործառնությունների կատարումը մերժվում է: Գործառնությունների կատարումը կարող է մերժվել Օպերատորի կողմից նաև այն դեպքերում, եթե.

- 3.13.1. դրանց կատարման արդյունքում կարող է խախտվել օրենսդրությունը կամ Օպերատորի կողմից սահմանված պահանջները (այդ թվում՝ խախտվել Օպերատորի, Գործընկերոջ կամ երրորդ անձի իրավունքները կամ օրինական շահերը)
- 3.13.2. դրանց կատարումը հնարավոր չէ Օպերատորից անկախ պատճառով
- 3.13.3. ՀՀ գործող օրենսդրությամբ կամ Պայմանագրով սահմանված այլ դեպքերում
- 3.14. Հաճախորդը կարող է Օպերատորի կողմից սահմանված կարգով Ծառայություններ Մատուցողներին տալ հաշվից անակցեպտ գանձում կատարելու իրավունք, և նման դեպքում անակցեպտ գանձման պահանջները ենթակա կլինեն կատարման նույն եղանակով, ինչպես դրանք այլապես կկատարվեին Հաճախորդից համապատասխան կարգադրություններ ստանալու դեպքում:
- 3.15. Օպերատորի /այդ թվում՝ Ֆինանսական Գործակալի/ սխալի պատճառով Հաճախորդի հաշվին հաշվեգրված գումարները /այդ թվում՝ ավել գումարները/ կարող են Օպերատորի կողմից անակցեպտ կարգով հետ գանձվել հաշվից՝ ծանուցելով Հաճախորդին: Եթե հաշվի մնացորդը բավարար չէ սխալմամբ հաշվեգրված գումարն ամբողջությամբ վերականգնելու համար, Օպերատորը ոչ ուշ, քան սխալը թույլ տալու օրվանից հաշված 30 /երեսուն/ օրացուցային օրվա ընթացքում Հաճախորդին ներկայացնում է տարբերությունը վերադարձնելու պահանջ, և Հաճախորդը պարտավոր է 15 /տասնհինգ/ օրացուցային օրվա ընթացքում վերադարձնել համապատասխան գումարը:
- 3.16. Հաճախորդը պարտավոր է լինել բարեխիղճ և համաձայնել վերադարձնել երրորդ անձանց կողմից իր հաշվին սխալմամբ փոխանցված/վճարված գումարները, բացառությամբ այն դեպքերի, երբ նման երրորդ անձինք ունեն դրամական պարտավորություն Հաճախորդի նկատմամբ կամ նման պարտավորություն կառաջանա գումարների վերադարձման դեպքում:
- 3.17. Հաճախորդի կողմից սխալմամբ մեկ այլ Հաճախորդի կամ Ծառայություն Մատուցողի փոխանցված/վճարված միջոցները կարող են հետ վերադարձվել միայն այդ այլ Հաճախորդի կամ Ծառայություն Մատուցողի համաձայնությամբ
- 3.18. Այլ Հաճախորդի կամ Ծառայություն Մատուցողի փոխանցում/վճարում կատարելու մասին Հաճախորդի կարգադրությունը համարվում է Օպերատորի կողմից կատարված այն պահից, երբ համապատասխան միջոցները դուրս են գրվում փոխանցում/վճարում կատարող Հաճախորդի ԲիՄանի էլեկտրոնային դրամապանակից և հաշվեգրվում են ստացող Հաճախորդի կամ Ծառայություն Մատուցողի ԲիՄանի ենթահաշվին:
- 3.19. Այլ ֆինանսական կազմակերպության կողմից սպասարկվող հաշիվներին և/կամ հաճախորդներին ոչ առցանց փոխանցում կատարելու մասին Հաճախորդի կարգադրությունը համարվում է Օպերատորի կողմից կատարված այն պահից, երբ համապատասխան միջոցները դուրս են գրվում փոխանցող Հաճախորդի ԲիՄանի ենթահաշվից, փոխարկվում Օպերատորի կողմից և նման այլ կազմակերպությանը փոխանցելու նպատակով դուրս գրվում Օպերատորի բանկային հաշվից՝ գործարքի անհրաժեշտ մանրամասները պարունակող կարգադրությամբ:

- 3.20. Պայմանագրի լուծման դեպքում Օպերատորը Հաճախորդի պահանջով մարում է ԲիՄանի ենթահաշվի դրական մնացորդը կամ փոխանցում է այն այլ Հաճախորդի ԲիՄանի ենթահաշվին՝ համապատասխան Սակագների և այլ պայմանների կիրառմամբ:
- 3.21. Օպերատորի և Հաճախորդի միջև այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, Հաճախորդին մատուցած Ծառայությունների համար Օպերատորը Հաճախորդից ստանում է վարձատրություն՝ համաձայն սակագների՝ անակցեպտ կարգով գանձելով այն Հաճախորդի ԲիՄանի ենթահաշվից:
- 3.22. ԲիՄանի ենթահաշվով կատարված բոլոր գործառնություններն արտացոլվում են բջջային հավելվածի Պատմություն Բաժնում, իսկ նախատեսված դեպքերում դրանց մասին հաղորդագրություն է ուղարկվում Հաճախորդի կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին և/կամ բջջային հեռախոսահամարին:
- 3.23. Ծառայությունների հասանելիության և կատարման ժամերը սահմանվում են Ծառայություններից Օգտվելու Կանոններով:

4. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

4.1. Հաճախորդն իրավունք ունի՝

- 4.1.1. օգտվել Ծառայություններից Պայմանագրի պայմաններին համապատասխան,
- 4.1.2. ստանալ տեղեկատվություն առաջարկվող Ծառայությունների, դրանց նկատմամբ կիրառվող սակագների և այլ պայմանների մասին,
- 4.1.3. ստանալ տեղեկատվություն հաշվով կատարված բոլոր գործառնությունների վերաբերյալ,
- 4.1.4. Պայմանագրով նախատեսված կարգով ցանկացած ժամանակ պահանջել Օպերատորից մարել կամ այլ կերպ տնօրինել ԲիՄանի ենթահաշվի մնացորդը:

4.2. Հաճախորդը պարտավոր է՝

- 4.2.1. Օպերատորին տրամադրել ճշգրիտ տեղեկատվություն և վավեր փաստաթղթեր /բնօրինակի պատճեններ/, ինչպես նաև անհապաղ տեղեկացնել Օպերատորին այդ տեղեկատվության փոփոխման դեպքում,
- 4.2.2. Ծառայություններից օգտվել անձամբ և բացառապես օրինական նպատակների համար: Հաճախորդը պատասխանատվություն է կրում նաև երրորդ անձանց իր ԲիՄանի ենթահաշվի տվյալների տրամադման և, հետևաբար, երրորդ անձանց կողմից իր Բզի Ուալլեթի միավորների օգտագործմամբ կատարված գործարքների համար:
- 4.2.3. Ձեռնպահ մնալ Օպերատորի պաշտոնական կայքը կամ ԲիՄանի ենթահաշվի կառավարման համար օգտագործվող այլ միջոցները Պայմանագրով չնախատեսված որևէ եղանակով օգտագործելուց,
- 4.2.4. Պարբերաբար ստուգել պաշտոնական կայքի Անձնական Բաժնում զետեղված տեղեկատվությունը,
- 4.2.5. Անմիջապես հայտնել Օպերատորին հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունների և արտասովոր հանգամանքների մասին և,

մասնավորապես, բջջային հավելվածի որևէ ծանուցման կամ կարգադրության սխալ լինելու կամ արտացոլված չլինելու դեպքում,

4.2.6. Ապահովել բջջային հավելվածի կառավարման վավերապայմանների /գաղտնաբառեր, PIN-կոդեր/ գաղտնիությունը և պաշտպանվածությունը չարտոնված օգտագործումից,

4.2.7. Բջջային հավելվածի կառավարման համար օգտագործվող բջջային հեռախոսահամարի փոփոխման, կորստի կամ այլ կերպով Հաճախորդի տիրապետումից դուրս գալու դեպքում՝ անհապաղ տեղեկացնել Օպերատորին՝ վերջինիս Թեժ Գծի ծառայության միջոցով կամ անձամբ ներկայանալով Օպերատորի մասնաճյուղ:

4.3. Օպերատորն իրավունք ունի.

4.3.1. մերժել որևէ գործարք և կասեցնել բոլոր Ծառայությունները կամ դրանց որևէ մասը՝ սխալ, խախտում կամ կեղծիք հայտնաբերելու դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ Օպերատորի մոտ կասկած է հարուցում գործարքի օրինականությունը կամ Իզի Ուալլեթի կառավարման վավերապայմանների պաշտպանվածությունը չարտոնված օգտագործումից,

4.3.2. Արգելափակել Իզի Ուալլեթի կառավարման վավերապայմանները /այդ թվում՝ նույնականացուցիչները/ և/կամ/ պահանջել Հաճախորդից փոփոխել դրանք /եթե Հաշվի կառավարման վավերապայմանների պաշտպանվածությունը չարտոնված օգտագործումից Օպերատորի մոտ կասկած է հարուցում կամ առկա է հավաստի փաստաթուղթ, որ դրանք պատկանում է/են/ այլ անձի,

4.3.3. Կասեցնել բոլոր Ծառայությունները կամ դրանց որևէ մասը մինչև 4.3.2 կետում նշված գործառույթի ավարտը, և լուծել Պայմանագիրը՝ 5 (հինգ) օրվա ընթացքում այդ գործառույթը չիրականացվելու դեպքում,

4.3.4. Հաճախորդի կողմից այնպիսի գործողություններ թույլ տրվելու դեպքում, որոնց արդյունքում կարող է վնաս պատճառվել Օպերատորին, Գործընկերոջը, երրորդ անձի կամ պետությանը, նման գործողությունը հայտնաբերելու պահից հաշված 1 (մեկ) ամսվա ընթացքում մերժել Հաշվից մարում, փոխանցում կամ վճարում կատարելու Հաճախորդի կարգադրությունները և պահանջները և կասեցնել Ծառայությունները, եթե դա անհրաժեշտ է Օպերատորի, Հաճախորդի, երրորդ անձանց կամ պետության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար,

4.3.5. Դադարեցնել Ծառայությունների մատուցումը՝ Պայմանագրի լուծման մասին Հաճախորդին ծանուցելու պահից,

4.3.6. Ձեռք բերել, մշակել և պահպանել տեղեկատվություն ԲիՄանի ենթահաշվի կառավարման համար օգտագործվող տեխնիկական միջոցների մասին,

4.3.7. Ելնելով օրենսդրության փոփոխությունից կամ տեխնիկական անհրաժեշտությունից փոփոխել Իզի Ուալլեթի նույնացուցիչներին ներկայացվող պահանջները կամ այլ պայմանները՝ նախօրոք այդ մասին ծանուցելով Հաճախորդին:

4.4. Օպերատորը պարտավոր է՝

- 4.4.1. Համակարգի օպերատորը պարտավոր է սահմանել Օգտատիրոջ նույնականացման պատշաճ ուսումնասիրության ընթացակարգ՝ համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ առևտրային բանկերի կողմից թողարկված վճարային քարտի միջոցով նույնականացման ընթացակարգի՝ բացառությամբ Ֆինանսական Միջոցառումների Աշխատանքային Խմբի (FATF) կողմից հրապարակված բարձր ռիսկային երկրների առևտրային բանկերի կողմից թողարկված վճարային քարտերի:
- 4.4.2. Գործադրել անհրաժեշտ միջոցներ առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում Ծառայություններից օգտվելու հնարավորությունը և Ծառայությունների պատշաճ որակն ապահովելու համար,
- 4.4.3. Հաճախորդին տրամադրել տեղեկատվություն ԲիՍանի էլեկտրոնայի դրամապանակի միջոցով կատարված գործառնությունների և դրա մնացորդի վերաբերյալ:
- 4.4.4. Կանխավճարը Օգտատիրոջ կողմից բանկային փոխանցման միջոցով կատարելու դեպքում՝ բանկային փոխանցման փաստաթղթում նշված տվյալները Համակարգի Օպերատորի մոտ եղած տվյալների հետ չհամապատասխանելու դեպքում փոխանցված գումարը հետ փոխանցել այդ փաստաթղթերում նշված վավերապայմաններով:
- 4.4.5. Միջոցներ ձեռնարկել «Իզի Փեյ» ԷՎՀ-ի միջոցով փոխանակվող ինֆորմացիայի գաղտնիության և երրորդ անձանց չլիազորված մուտքերից, օգտագործումից և/կամ բացահայտումից պաշտպանության ուղղությամբ:
- 4.4.6. Վեճերի ծագման դեպքում՝ Օգտատիրոջ խնդրանքով տրամադրել կնիքով հաստատված տեղեկանք Օգտատիրոջ կողմից «Իզի Փեյ» ԷՎՀ-ի միջոցով կատարված գործարքի մասին և «Իզի Փեյ» ԷՎՀ-ի կողմից համապատասխան ապրանքի և/կամ ծառայության դիմաց փաստացի կատարված վճարման մասին:
- 4.4.7. Օգտատերին տեղեկացնել բոլոր այն հանգամանքների առաջացման, փոփոխման կամ վերացման մասին, որոնք էական նշանակություն ունեն սույն պայմանագրի կատարման համար՝ մասնավորապես պաշտոնական կայքում հրապարակել սակագները և պարբերաբար թարմացնել ծառայությունների ցանկը, հրապարակել համակարգի կանոնները և այլն:
- 4.4.8. Տասն աշխատանքային օրվա ընթացքում Օպերատորի ներքին ընթացակարգում նշված կարգով քննել և հանգուցալուծում տալ հաճախորդների ներկայացրած բողոք-պահանջներին:
- 4.4.9. Իրականացնել սույն պայմանագրով, և Համակարգի Օպերատորի ինտերնետային էջերում նախատեսված այլ պարտավորություններ

5. Պատասխանատվություն

- 5.1 ԲիՍանի ենթահաշվի կառավարման վավերապայմանների կորստյան դեպքում, ինչպես նաև դրանց երրորդ անձանց հայտնի դառնալու կասկածի դեպքում, Հաճախորդը

պարտավոր է Օպերատորի կողմից սահմանված կարգով անհապաղ տեղեկացնել Օպերատորին: Մինչև վավերապայմանների արգելափակումը կամ փոփոխումը Հաճախորդը կրում է դրանց չարտոնված օգտագործման անբարենպաստ հետևանքների ռիսկերը, այդ թվում՝ կրում է պատասխանատվություն Օպերատորին պատճառված վնասների համար:

5.2 Օպերատորը չի կրում Հաճախորդի և որևէ երրորդ անձանց, այդ թվում՝ Ծառայություն Մատուցողների միջև հարաբերությունների բնույթը և դրանց օրինականությունը ստուգելու պարտավորություն:

5.3 Այլ բան հստակ սահմանված չլինելու դեպքում, Օպերատորը պատասխանատվություն չի կրում Ծառայություն Մատուցողների պարտավորությունների համար և չի կարող երաշխավորել վերջիններիս կողմից առաջարկվող ծառայությունների համապատասխանությունն օրենքի պահանջներին կամ դրանց նկարագրությանը, ծառայությունների որակը, քանակը, մատուցման ժամկետները կամ այլ պայմանները: Համապատասխանաբար, Օպերատորը չի ընդունում Ծառայություն Մատուցողների կողմից թույլ տրված հնարավոր խախտումներին վերաբերող բողոքներ կամ կատարված վճարումների վերադարձման պահանջներ:

5.4 Յուրաքանչյուր Կողմ պատասխանատվություն է կրում Պայմանագրի կատարման ընթացքում մյուս Կողմին պատճառված իրական վնասների համար: Կողմերը հրաժարվում են և զերծ են պահում միմյանց անուղղակի վնասների և բաց թողնված օգուտների հատուցման պահանջներից: Օպերատորի պատասխանատվության չափը ցանկացած դեպքում չի կարող գերազանցել նման պատասխանատվության առաջացման համար հիմք ծառայած հանգամանքի տեղի ունենալու պահի դրությամբ Հաշվի մնացորդի չափը: Օպերատորը պատասխանատվություն չի կրում ոչ իր մեղքով առաջացած խափանումների, սխալների և իրավախախտ գործողությունների համար, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված հիմքերով /այդ թվում՝ Համակարգի տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման ժամանակ/ Ծառայությունները կասեցնելու կամ դադարեցնելու ցանկացած հետևանքների համար:

5.5 Հաճախորդը ինքնուրույն է կրում բոլոր ռիսկերը, որոնք կարող են առաջանալ Օպերատորի կողմից սահմանված պայմանները խախտելու, ինչպես նաև վերջինիս խորհուրդներին և ցուցումներին չհետևելու արդյունքում:

6. Գաղտնիություն, տեղեկատվության պահպանում

6.1 Կողմերն ապահովում են Պայմանագրի շրջանակներում միմյանց միջև փոխանակվող տեղեկատվության պաշտպանվածությունը:

6.2 Օպերատորն ապահովում է Հաճախորդի անձնական տվյալների, Հաշվով կատարված գործարքների, Հաշվի մնացորդի և այլ տեղեկատվության գաղտնիությունը: Տեղեկատվությունը կարող է բացահայտվել Օպերատորի կողմից բացառապես այն դեպքերում և այն ծավալով, որը պահանջվում է օրենքով, անհրաժեշտ է

- Ծառայությունների մատուցման համար, կամ անհրաժեշտ է Օպերատորի խախտված իրավունքի օրինական /այդ թվում դատական/պաշտպանության համար: Բոլոր այլ դեպքերում նման տեղեկատվությունը կարող է բացահայտվել միայն Հաճախորդի համաձայնությամբ կամ կարգադրությամբ: Օպերատորն իրավունք ունի որևէ վճարում ստացող անձին բացահայտել նրան վճարում կատարած անձի անձնական տվյալները և վճարման գործարքին վերաբերող մանրամասնությունները:
- 6.3 Պայմանագրի նպատակների համար գաղտնի չի համարվում այն տեղեկատվությունը, որը կարող էր ստացվել այլ եղանակով առանց գաղտնիության պահանջների խախտման:
- 6.4 ԲիՄանի ենթահաշվով կատարված գործառույթներին վերաբերող տեղեկատվությունը և փաստաթղթերը Օպերատորը ողջամտության սկզբունքից ելնելով պահպանում է համապատասխան Պայմանագրի լուծման ամսաթվից հաշված առնվազն 5 (հինգ) տարի ժամկետով: Օպերատորը կարող է սահմանափակել պաշտոնական կայքի Անձնական Բաժնում արտացոլվող տեղեկատվության վաղեմությունը 1 (մեկ) տարի ժամկետով: Պայմանագիրը դադարեցնելուց հետո ԲիՄանի ենթահաշվով կատարված գործառույթներին վերաբերող տեղեկատվությունը չի պահպանվում Անձնական Բաժնում:
- 6.5 Բջջային հեռախոսի միջոցով բջջային հավելվածը կառավարելու հնարավորությունից օգտվելու դեպքում, նման ցանկությունը հայտնելու փաստով համարվում է, որ Հաճախորդը լիազորել է Օպերատորին դիմել բջջային կապի համապատասխան օպերատորին կամ այլ անձանց և ստանալ հաստատում առ այն, որ համապատասխան բջջային հեռախոսահամարը հատկացված է Հաճախորդին, ինչպես նաև տեղեկացվել հեռախոսահամարի անջատման, փոփոխման, այլ անձի հատկացման կամ դրա սպասարկման պայմանագրի լուծման դեպքերում: Հաճախորդի կողմից բջջային հեռախոսահամարի օգտագործման կասեցման կամ դադարեցման մասին երրորդ անձից ստացված տեղեկատվության հիման վրա Օպերատորն իրավունք ունի, սակայն պարտավոր չէ, արգելել բջջային հեռախոսահամարի օգտագործմամբ բջջային հավելվածի կառավարման հնարավորությունը: Օպերատորն իրավունք ունի Հաճախորդից պահանջել գրավոր ապացույց առ այն, որ բջջային հեռախոսահամարը հատկացված է իրեն:
- 6.6 Հաճախորդը կրում է իր կողմից Օպերատորին տրամադրված տեղեկատվության ոչ ճշգրիտ լինելու բացասական հետևանքների ռիսկերը:

7. Ծանուցումներ

- 7.1 Պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում Պայմանագրի շրջանակներում բոլոր ծանուցումները կատարվում են էլեկտրոնային եղանակով՝ բջջային հավելվածի միջոցով:
- 7.2 Բացառապես Հաճախորդի հարմարության համար Օպերատորը կարող է նախատեսված դեպքերում ծանուցումների պատճենները կամ դրանց մասին հաղորդագրություններ

ուղարկել Հաճախորդի կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեով և/կամ բջջային հեռախոսահամարով:

- 7.3 Տեխնիկական առանձնահատկություններից էլնելով Օպերատորը չի կարող երաշխավորել էլեկտրոնային փոստի հասցեով կամ բջջային հեռախոսահամարով ուղարկված հաղորդագրությունների ստացումը Հաճախորդի կողմից:
- 7.4 Որևէ պարագայում Բջջային հավելվածի միջոցով ծանուցում տալու հնարավորություն չունենալու դեպքում, Հաճախորդը, ըստ անհրաժեշտության, պետք է կապ հաստատի Օպերատորի հետ՝ վերջինիս Թեժ Գծի ծառայությանը զանգահարելու կամ Օպերատորի մասնաճյուղ այցելելու միջոցով:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)

Կողմերը պատասխանատվություն չեն կրում իրենց պարտավորություններն ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու կամ դրանց կատարումն ուշացնելու դեպքում, եթե դա հետևանք է ջրհեղեղի, հրդեհի, երկրաշարժի, այլ բնական աղետի, պատերազմական գործողության, զինված հարձակման, պայթյունի, զանգվածային խռովության, գործադուլի, պետական մարմնի կողմից ընդունված ակտի, մայրուղային ենթակառուցվածքների խաթարման, էլեկտրասնուցման կրճատման կամ թերացած Կողմի վերահսկողությունից դուրս այլ իրադարձության:

9. Կիրառվող օրենսդրությունը

Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ:

10. Պայմանագրի լեզուն

Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով: Հաճախորդի հարմարության համար Պայմանագիրը, ինչպես նաև կիրառվող սակագները և կանոնները կարող են թարգմանվել և հրապարակվել նաև այլ լեզուներով, սակայն նման թարգմանությունների և հայերեն տարբերակի միջև որևէ անհամապատասխանության դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:

11. Բողոքների ներկայացման և դիտարկման կարգը

- 11.1 Հաճախորդը պարտավոր է ստուգել յուրաքանչյուր օրացուցային ամսվա ընթացքում ԲիՄանի ենթահաշվով կատարված գործառնությունները և որևէ

անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում Օպերատորին ծանուցել դրանց մասին՝ համապատասխան օրացուցային ամսվա ընթացքում: Եթե սահմանված ժամկետում Հաճախորդը չի հայտնել Օպերատորին որևէ անհամապատասխանության մասին, ապա համապատասխան օրացուցային ամսվա ընթացքում ԲիՄանի ենթահաշվով կատարված գործառնությունները համարվում են Հաճախորդի կողմից անվերապահորեն հաստատված և ընդունված, և Օպերատորը չի ընդունի այդ օրացուցային ամսվանը վերաբերող որևէ հետագա պահանջներ և առարկություններ:

- 11.2 Դժգոհություններ կամ առաջարկություններ ունենալու դեպքում՝ Հաճախորդը կարող է դիմել Օպերատորին՝ ներկայացնելով գրություններ, այդ թվում՝ էլեկտրոնային փոստով, այցելելով Օպերատորի մասնաճյուղ կամ զանգահարելով Օպերատորի Թեժ Գծի ծառայություն: Օպերատորը իր կողմից սահմանված կանոնների համաձայն՝ ընդունում է բողոքների և առաջարկությունների վարման ներքին ընթացակարգեր, որոնք փակցվում են մասնաճյուղներում և տեղադրվում Օպերատորի վեբ-կայքում: Օպերատորը պարտավոր է արձագանքել ստացված բողոքներին և առաջարկություններին՝ իր կողմից ընդունված ընթացակարգերով սահմանված կարգով և ժամկետներում՝ պահպանելով օրենսդրությամբ սահմանված պահանջները: Հաճախորդի գրավոր բողոքներին պետք է տրվի գրավոր պատասխան:

12. Վեճերի լուծման կարգը

- 12.1 Կողմերը պետք է ձգտեն լուծել ծագած վեճերը բարյացակամորեն՝ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:
- 12.2 Վեճը լուծելու մասին փոխադարձ համաձայնության բացակայության դեպքում այն լուծվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

13. Պայմանագրի պայմանների փոփոխումը

- 13.1 Օպերատորը կարող է սեփական հայեցողությամբ միակողմանի կարգով փոփոխել Պայմանագրի պայմանները՝ այդ մասին առնվազն 3 (երեք) օր առաջ Վեբ-կայքում հրապարակային ծանուցում զետեղելու և Հաճախորդին ծանուցելու միջոցով՝ դրանցում նշելով փոփոխությունների ուժի մեջ մտնելու պահը:
- 13.2 Փոփոխությունների հետ համաձայն չլինելու դեպքում՝ Հաճախորդը լուծում է Պայմանագիրը՝ այդ մասին անմիջապես ծանուցելով Օպերատորին:
- 13.3 Փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո Հաշվով որևէ գործառնություն կատարելու դեպքում Փոփոխությունները համարվում են Հաճախորդի կողմից անվերապահորեն ընդունված:
- 13.4 Այլ բան սահմանված չլինելու դեպքում, Պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:
- 13.5 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանի կարգով լուծել Պայմանագիրը՝ առնվազն 10

(տասը) օր առաջ, իսկ մյուս Կողմի կողմից Պայմանագրի պայմանների խախտման դեպքում՝ անհապաղ ծանուցելով մյուս Կողմին:

13.6 Պայմանագիրը կարող է լուծվել Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

13.7 Իզի Ստանդարտ Հաճախորդը կարող է դադարեցնել Պայմանագիրը միայն սովորական գրավոր եղանակով ներկայացված ծանուցմամբ:

14. Կողմերի վավերապայմանները

Գործընկեր

«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ
Հասցե՝ Ա, Ահարոնյան 2

Համակարգի օպերատոր

«Իզի Փեյ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Ադոնցի 8/171